



**Վ. ԲՐՅՈՒՍՈՎԻ ԱՆՎԱՆ ՊԵՏԱԿԱՆ
ՀԱՄԱԼՍԱՐԱՆ
ГОСУДАРСТВЕННЫЙ УНИВЕРСИТЕТ
ИМЕНИ В. БРЮСОВА
BRUSOV STATE UNIVERSITY**

**ԲԱՆԲԵՐ
Վ. ԲՐՅՈՒՍՈՎԻ ԱՆՎԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ
ВЕСТНИК ГОСУДАРСТВЕННОГО УНИВЕРСИТЕТА ИМЕНИ
В. БРЮСОВА
BULLETIN OF BRUSOV STATE UNIVERSITY**

ԼԵՉՎԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԲԱՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆ

ЛИНГВИСТИКА И ФИЛОЛОГИЯ

LINGUISTICS AND PHILOLOGY

1(56)

**Վ. ԲՐՅՈՒՍՈՎԻ ԱՆՎԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ
«ԼԻՆԳՎԱ» ՀՐԱՏԱՐԱԿԶՈՒԹՅՈՒՆ**

ԵՐԵՎԱՆ - 2021

ՆԱՄԱԿԱԳՐՈՒԹՅԱՆ ԺԱՆՐԸ. ԼԵԶԿԱՌՃԱԿԱՆ ՔՆՆՈՒԹՅԱՆ ՓՈՐՁ

ՍՈՒՍԱՆՆԱ ԳԱԲՐԻԵԼՅԱՆ

Հիմնաբառեր՝ հաղորդակցում, նամականի, ձևանմուշ, ավանդույթ, կառուցվածք, գրավոր խոսք, էլեկտրոնային նամակագրություն, զարգացման միտումներ

Տարածության և ժամանակի մեջ անձի (կամ անձերի) միջև տեղեկատվություն տարածելու, հաղորդակցվելու անհրաժեշտությունը՝ կոնկրետ համատեքստի շրջանակում, պայմանավորեց գրական-ստեղծագործական այս ժանրի գոյությունը: Իմաստային և կառուցվածքային առումով նամակը (դասական ըմբռնմամբ) ամբողջական տեքստ է, որի մշակութային-պատմական արժեքը մեծ է:

Սույն ուսումնասիրության նպատակը հաղորդակցության ավանդական, նաև ժամանակակից միջոցներից մեկի՝ նամակագրության քննությունն է: Ուսումնասիրողները քիչ են անդրադարձել ժանրին առնչվող լեզվաոճական խնդիրներին. դրանց քննությունը, կարծում ենք, հետաքրքիր է ոչ միայն հայերեն նամակագրության առանձնահատկությունները քննելու, ընդհանրացնելու, այլև ցանկացած ստեղծագործողի (մեր պարագայում՝ Ե. Չարենցի) գրական ժառանգությունը ամբողջացնելու և արժևորելու տեսանկյունից: Հետազոտության արդիականությունը պայմանավորված է նրանով, որ փորձ է արվում բացահայտել ժամանակի ընթացքում ժանրի կրած լեզվական, կառուցվածքային, ոճական փոփոխությունները և զարգացման միտումները: Նամակագրության կրած բովանդակային և արտահայտման եղանակի ձևափոխություններն ակնհայտ են. այս իրողությանը նպաստել է նաև գիտատեխնիկական առաջընթացը, որը շփման բազմաթիվ և բազմաձև հնարավորություններ է ընձեռում՝ միաժամանակ առաջադրելով նորանոր պահանջներ: Աշխատանքում համադրվում, տարբերակվում և վերլուծվում են գրավոր խոսքի դրսևորման յուրահատկությունները, հեռանկարները, ուղղվածությանը:

Մի փոքր հարցի պատմությունից: Ընդհանրապես նամակագրության ժանրը հին և հարուստ պատմություն ունի: Անտիկ աշխարհում այն լայնորեն կիրառվող ձեռագիր գրություն էր, որը դարեր շարունակ գրավոր հաղորդակցման միակ միջոցն էր տարբեր և շատ հաճախ հեռավոր տարածությունների միջև: Ժանրը ի սկզբանե լայն

տարածում է ունեցել հատկապես հռոմեական գրականության մեջ: Հայտնի են հույն մտածողներ Էպիկուրի, Սենեկայի, Կատոնի, Ցիցերոնի, Պլինիոս Կրտսերի, Օվիդիոսի, Հորացիոսի և այլոց նամակները (վերջիններս չափածո նամակի օրինակներ են տվել): Դրանք պատմական, գիտական, գրական արժեք ունեցող կարևոր սկզբնաղբյուրներ են՝ որպես ժամանակի (մ.թ.ա. և մ.թ.) հասարակական, քաղաքական, հոգևոր կյանքի վկայություններ, իսկ լայն առումով փիլիսոփայական խորհրդածություններ են՝ շատ հաճախ հրապարակային շեշտադրումներով:

Հայ գրականության մեջ ժանրը ի հայտ է եկել 5-րդ դարում. այն ավելի տարածված էր «Թուղթ» անվանումով, հորինված էր նամակի ձևով և ուղղված էր որևէ անձի կամ անձերի: Առանձնանում են Մ. Խորենացու, Ե. Կողբացու, Եղիշեի, Ղ. Փարպեցու, Գ. Նարեկացու, Մ. Գոշի և այլոց նամակները:

Գիտական որևէ խնդրին՝ աստվածաբանական, փիլիսոփայական և այլն, նվիրված գրավոր այս շարադրանքները կառուցվածքային, բովանդակային և լեզվական մակարդակով հին և միջնադարյան գրական կյանքի և մտածողության ընթացքի վրա հսկայական ազդեցություն են թողել: Դրանք շատ հաճախ դուրս են գալիս լոկ կրոնական-եկեղեցական հարցերի քննության սահմաններից և ներառում են պատմափիլիսոփայական, գեղագիտական խնդիրներ՝ կախված ժամանակի հասարակական-քաղաքական, դավանաբանական, մշակութային կյանքի բնույթից և հարցադրումներից: Դեռևս անտիկ շրջանում մշակել էին համընդհանուր, պատրաստի և մեկընդմիջտ ընդունված նորմեր, որոնք գրավոր հաղորդակցման տվյալ փուլում հետևողականորեն պահպանվում էին՝ ապահովելով թղթակցող անձերի կապը, հարաբերությունները: Գրագրության ընդունված նորմերը հստակորեն սահմանում էին շարադրանքի բովանդակային և ձևային պահանջները: Ըստ «Նամակագրության ոճի անտիկ տեսություններ» («Античные теории эпистолярного стиля») աշխատության՝ ժանրին ներկայացվում էին հետևյալ չափանիշները և պայմանները. նախ՝ նամակների բովանդակությունն ու կառուցվածքը ենթարկվում էին որոշակի կաղապարի: Բովանդակային առումով այն հակիրճ շարադրանք էր միայն ամենակարևորի մասին: Նամակի սկիզբը և ավարտը գրվում էին ձևանմուշին համապատասխան. դրանք սկսվում էին հեղինակի անունից, այնուհետև հասցեատիրոջ անունն էր, հետո միայն ողջույնի խոսքեր, առողջության և բարեկեցության մասին տեղեկություն: Նամակն ավարտվում էր մեծարանքի խոսքերով, երջանկության և առողջության բարեմաղթանքներով <https://www.science-education.ru/ru/article/view?id=23775>:

Ժամանակի հետ ձևի և բովանդակության փոխադարձ կապով պայմանավորված նորմատիվ նամակագրության սկզբունքները որոշակի փոփոխությունների են ենթարկվում՝ ներառելով նորանոր խնդիրներ՝ լուսավորական, բարոյախրատական, գեղագիտական և այլն, որոնք էլ բնականաբար լեզվաոճական, արտահայտչական նոր հնարավորություններ և հմտություններ են թելադրում:

18-19-րդ դդ. եվրոպական և ռուս գրականության մեջ (Ժ.Ժ. Ռուսո, Վ. Գյոթե, Ֆ. Դոստոևսկի, Ա. Չեխով և այլք) ժանրը նորանոր զարգացումներ և դրսևորումներ է ստանում՝ դառնալով գեղարվեստական հնարք, որը նպաստում է կերպարի հոգեբանական վերլուծության խորացմանը:

19-20-րդ դդ. հայ արձակույթ ևս (թե՛ արևմտահայ, թե՛ արևելահայ) այն իր արտացոլումն ունեցավ՝ Ս. Տյուսաբ «Մայտա», Ե. Օտյան «Վաճառականի մը նամակները», Նար-Դոս «Աննա Սարոյան» և այլն: Հայ մտավորականներից շատերն ունեն հարուստ նամականի, որը նրանց ստեղծագործական ժառանգության կարևոր մասն է կազմում՝ լրացնելով և հարստացնելով այն: Կառանձնացնեինք Դ. Վարուժանին, Ռ. Սևակին, Վ. Տերյանին, Ա. Չոպանյանին, Վ. Փափագյանին, Ավ. Իսահակյանին, Հովհ. Թումանյանին, Ե. Չարենցին և շատ ուրիշների: Վերջինիս կանդաղադառնանք ավելի հանգամանորեն՝ հիմնավորմամբ, որ նրա նամականին ուշագրավ է թե՛ բովանդակային առումով, և թե՛ արտահայտման ձևերի բազմազանությամբ: Գրավոր հաղորդակցումից բացի՝ այն ձեռք է բերել նաև գեղագիտական գործառույթ՝ դառնալով ստեղծագործական անհատականության կարևոր բաղադրիչ:

Որպես բովանդակության հաղորդման միջոց՝ ժանրի ձևային դրսևորումները բազմազան են՝ նամակ-ուղերձ, նամակ-պամֆլետ, նամակ-խոստովանանք, նամակ-բանաստեղծություն, նամակ-վեպ և այլն:

Խնդրի քննության առանձնահատկությունն այն է, որ նամակագրության ժանրը լայն առումով կապված է և՛ պաշտոնական-գործավարական, և՛ խոսակցական, և՛ հրապարակախոսական, և՛ գեղարվեստական ոճերին: Թերևս փոխըմբռնման, խոսքի հրատապության և կարևորության պահանջն էր, որ կողմնորոշեց Ե. Չարենցին, պահպանելով լեզվական պայմանականությունը և նպատակահարմարությունը, հասարակական քննարկման դնել նոր գեղագիտության հարցը: Խոսքը վերաբերում է «էպիքական լուսաբաց» (1930թ.) ժողովածուին: Եվ ընտրվեց նաև չափածո նամակի ժանրը՝ «Թուղթ Ակսել Բակունցին, գրված Երևանից», «Թուղթ բանաստեղծ բարեկամիս՝ Ն. Ն.-ին, գրված Երևանից»: Հետագայում ևս նա դիմեց թղթին. «Թուղթ Եղիշե Չարենցից» անավարտ պոեմը բաղկացած է երկու

մասից՝ Ա. «Ուղերձ», Բ. «Վիշտը պոետի»: 1936թ. գրեց «Թուղթ Իոսիֆ Ստալինին - Եղիշե Չարենցից» պոեմը (30-ական թթ. երկրորդ կեսին մամուլը ողողված էր Ստալինին ուղղված անձնական և խմբակային նամակներով, տարաբնույթ ստեղծագործություններով):

Կոնկրետ որևէ մեկին կամ անձանոթ մեկին հասցեագրված նամակները հնարավորություն էին տալիս անկաշկանդ արձարծել ոչ միայն գեղագիտական, այլև հասարակական-քաղաքական կյանքին առնչվող խնդիրներ, իսկ բանաստեղծությունների՝ թուղթ, ուղերձ անվանումը նաև ոճական խնդիր էր լուծում՝ հանդիսավորություն հաղորդելով տեքստին: Գեղարվեստական խոսքի հռետորաբանության արտահայտչական կարողությունները սկզբունքային համոզմունք են դառնում ժամանակ-անհատ հարաբերությունների քննարկման շրջանակներում:

Լեզվաոճական հնարքների կիրառության հետաքրքիր դրսևորում ունի Ե. Չարենցի նամականին: Ոչ միայն նամակագրությունը, այլև օրագրային գրառումները, մակագրությունները, ընծայագրերը գրողին բնութագրելու, գնահատելու ամենևին էլ երկրորդական աղբյուր չեն: Ի դեպ, գրողի անձնական նամակագրությունը հետաքրքիր է ոչ միայն գրականագետների, այլև ընթերցողների համար: Անձնական նամակագրության մեջ գեղարվեստական կողմը երբեմն կարող է ոչ առաջնային լինել, իսկ հաղորդվող նյութը կարող է կարևոր լինել միայն գրողի և ստացողի համար և ոչ ավելին:

Նամակների պաշտոնական կամ մասնավոր լինելը կախված է թղթակցող կողմերի միջանձնային հարաբերություններից և իրադրությունից: Երբեմն դրանց առանձին հատվածները հիշեցնում են արձակ բանաստեղծություններ՝ քնարական բովանդակությամբ, անկաշկանդ շարադրանքով, փոխադարձ ընկալելի ակնարկներով, վերհուշի դրամատիկ զարգացումներով, որոնք հոգեբանական ներգործման ազդակներ ունեն:

Ե. Չարենցի նամականիում անձնական-մտերմիկ բնույթի բազմաթիվ նամակներ կան, որոնք ուղղված են կնոջը՝ Իզաբելային, դերասանուհի Ա. Ոսկանյանին, մտերիմներից՝ Լեյլին, Ա. Հարությունյանին և ուրիշներին:

Մասնավոր բնույթի այս նամակներում տեղեկատվության գործոնը հետին պլանում է. առաջնայինը հոգեվիճակն է, որն էլ պայմանավորում է դրանց յուրահատկությունը: Լեզվական միջոցների ընտրությունը համապատասխանում է տվյալ իրավիճակում հաղորդակցման նպատակին: Խոսքի պատկերավորությունն ու արտահայտչականությունը ապահովվում են համապատասխան բառապաշարի միջոցով, այն է՝

հուզական ապրումներ արտահայտող, գնահատողական վերաբերմունք ցույց տվող, փաղաքշական-փոքրացուցիչ մասնիկներով կազմված բառաշերտ, դիմելածներ, կոչականներ, ձայնարկություններ, վերաբերականներ և այլն:

Շարահյուսական մակարդակում պարզ և բարդ կառույցները (միակազմ և երկկազմ, թերի, համառոտ, ընդարձակ), հնչերանգային ձևերը նպաստում են խոսքի պատկերավորությանը և ոճական բազմազանությանը:

Ժանրի ընդհանրական բնութագիրը հանգում է հետևյալին. այն անհատական-հոգեբանական գործոնով, ինչպես նաև ազգային-մշակութային ավանդույթներով պայմանավորված գրավոր հաղորդակցում է, որը դրսևորվում է խոսքային զանազան միջոցներով: Գրավոր խոսքի համատեքստում էթիկական նորմերին կարևոր դեր է վերապահված: Այսպես՝ նամակի մտերմական և հարգական սկզբին՝ «Սիրելի...», «Հարգելի...», «Թանկագին...», «Մեծարգո...» և այլն, հաջորդում է բովանդակային կողմը՝ փոխվստահություն ենթադրող հարցադրումներով ու ձևակերպումներով՝ «Ինչպե՞ս եք...», «Ներեցե՞ք ինձ, որ...», «Ընդունե՞ք իմ սրտից բխող...» և այլն: Հրաժեշտի խոսքը ևս բարեկրթության սահմաններում է՝ «Ամենայն բարիք...», «Հարգանքներս...», «Խոնարհվում եմ...», «Ձեզ անկեղծ սիրող...», «Ամուր սեղմում եմ Ձեր ձեռքը...» և այլն կամ ավելի մտերմիկ՝ «Համբուրում եմ...», «Քո (Ձեր)», «Ողջ լեր» և այլն (վերջիններս Ե.Չարենցի նախընտրելի արտահայտություններից են):

Անտարակույս, անձնական – մտերմիկ նամակը վերամիավորում է մարդկանց՝ նպաստելով փոխըմբռնմանը, ճանաչողությանը. այն ներաշխարհը բացահայտելու, ինքն իր հետ մնալու, անկեղծանալու եզակի հնարավորություն է (ձեռագիրն անգամ շատ բան կարող է ասել անձի հոգեբանական նկարագրի մասին): Եվ ընդհանրապես այն գրավոր հաղորդակցման դատողական-զգացական բնույթի ինքնարտահայտման կերպ է, որին ի պահ են տրվում անցյալի հիշողությունները, գաղտնիքները, ներկան՝ ապագային միտված հեռանկարով կամ դրա բացակայությամբ: Ըստ որում՝ արտահայտչական միջոցների ընտրությանը զուգահեռ կարևորվում է ոչ միայն էթիկետի, այլև ուղղագրական – ուղղախոսական, առհասարակ քերականական նորմերի պահպանումը:

Բանաստեղծի գեղագիտությունը լեզվաոճական տարրերի ամբողջության մեջ արտահայտչականության պլանում շարահյուսական դարձույթներից նախընտրում է ընդհատումը (парцелляция), զեղչումը, կրկնությունները և այլն: Հաղորդակցական նպատակին

համապատասխան՝ նամակներում պատկերավորման այս միջոցները խոսքը դարձնում են ավելի արտահայտիչ, զգացական: Լեզվախոսքային ամեն միավոր, որը հաղորդակցական արժեք ունի, հնարավորություն է տալիս նաև հոգեբանական առումով առարկայական և հուզական ներկայացնել իրավիճակը: Վերոհիշյալները խոսքային արտահայտչականության տեսանկյունից ընդհանրապես բնորոշ են Ե. Չարենցի գրելաոճին և նախասիրություններ են, որոնք դրսևորվել են բանաստեղծի ոչ միայն գեղարվեստական ստեղծագործություններում, այլև նամակներում: Հաղորդակցվող անձերի փոխհարաբերությունը, տրամադրությունը, նամակ գրելու շարժառիթը, թեման, նպատակը թելադրում են լեզվական որոշակի միջոցների ընտրություն: Անկեղծությունը, անբռնազբոսիկությունը դառնում են ուղեկցող հանգամանքներ՝ առհասարակ պայմանավորելով առարկաներին, երևույթներին տրված զգացական-գնահատողական բնորոշումների բնույթը:

Մասնատումը, որին կանդրադառնանք, Ե. Չարենցը գործածել է նաև չափածո գործերում («Խմբապետ Շավարշը», «Չարենց-Նամե» և այլն): Շարահյուսական այս դարձույթում խոսքային միավորները ընդհատ-ընդհատ են ներկայացվում: Կապակցված խոսքը տարանջատված է մասերի, որոնցից յուրաքանչյուրը ունի հնչերանգային ինքնուրույնություն և հաղորդակցման անկախ միավոր է՝ օժտված հուզաարտահայտչական, երանգներով: Անսպասելի ընդհատումը, որը գրավոր խոսքում արտահայտվում է հիմնականում վերջակետով, հուզականության հետ ընդգծում է նաև բառի բովանդակային կողմը: Այսպես՝ Չարենցը մի քանի ջերմ նամակներ է հասցեագրել բանաստեղծուհի Լեյլիին (Փառանձեմ Սահակյան-Տեր-Մկրտչյան): Մեջբերում նամակից. «Կուզեի, որ ինձ նամակ գրեք: Շատ կուզեի: Ձեզ համար յոթը բալլադ եմ գրել: Մի բալլադի վերնագիրն է՝«Խեղկատակ»: Նշանակում է –այտ. Ե՛ս եմ: -Խեղկատակ: Ոչինչ լավ է: Նշանակում է՝ սուտ է: Լեյլի: Լեյլի: Լավ Լեյլի: Լեյլի:» (Գասպարյան 1967: 375):

Բառերի, բառակապակցությունների, լեզվական միավորների կրկնությունները (այս դեպքում՝ կոչականի) ոճական արժեք ունեն: Հնչերանգային ավարտվածություն ունեցող և մեկուսացված բառերի կրկնությունները տարբեր երանգավորում են հաղորդում խոսքին՝ երևույթների տևական բնույթ, մնայունություն, շարունակականություն՝ խտացնելով հուզական ընկալումները:

Առանձնացնենք նաև զեղչումը: Ի դեպ, խոսքաշարում քերականական զեղչումը տարբերվում է ճարտասանական զեղչումից: Առանձնահատկությունն այն է, որ առաջինը նպաստում է խոսքի

սեղմությանը և ենթադրում է զեղչված միավորի վերականգնումը: Ճարտասանական զեղչումը այլ հնարավորություն և յուրահատկություն է հաղորդում շարադրանքին. առանձին բառերի, արտահայտությունների նպատակային բացթողումը հուզական հաղորդակցման միջավայրում որոշակի հոգեմիճակի արտացոլումն է: Դա գեղարվեստական հնարք է, որ թույլ է տալիս երևակայությամբ նոր պատկերներ, իրավիճակներ ենթադրել, դրանք մտովի վերապրելու և վերականգնելու ներքին կարողություն դրսևորել:

Մի հատված Ե.Չարենցի՝ արձակագիր Կ.Միքայելյանին ուղղած գրությունից. «Կարեն, Այնքան եմ գազազած քո դեմ և, երևակայիր՝ մասամբ իմ դեմ, որ անհնարին է ասել...Գիտեմ, որ դու էլ ես գազազած, բայց... ո՞վ է մեղավոր. **մենք և - միմիայն Մենք**, այսինքն՝ ես, դու - **և բոլոր Մեզ** նմանները, հայ մտավորականության այն մասը, որը պայմանականորեն իբրև թե **միակ** ԿԱՄՈՒՐՁՆ է մեր անցյալի և ներկայի միջև, սակայն, ինչպես երևում է - **երերուն** է այդ կամուրջը, ինքնությունը կորցրած, խեղճ ու **անկամ ...**» (Չարենց 1967: 448:):

Ե. Չարենցը գործնական նամակագրություն է ունեցել ժամանակի հասարակական-քաղաքական տարբեր գործիչների, մտավորականների հետ՝ Ա. Մռավյան, Մ.Շահինյան, Մ. Աբեղյան, Ա. Լուինաչարսկի և այլք: Պաշտոնական բնույթի նամակներում պահպանվում են լեզվական նորմը, ժանրի կառուցվածքային և ոճական յուրահատկությունները. բառապաշարը չեզոք է, ասելիքը՝ գործնական, փաստարկված, շարահյուսական կառույցները՝ գործառական ոճին բնորոշ և հստակ:

Ժանրային, ոճական այս կամ այն ձևին նախապատվություն տալը պայմանավորված է նյութի բովանդակությամբ և հաղորդման նպատակով: Սա մասնավորապես առնչվում է Ե. Չարենցի «Բաց նամակներին», որոնք ասես վերածվել են երկխոսության՝ ժամանակի և անձնական ճակատագրի վերաբերյալ հարցի (գերազանցապես ճարտասանական) ու ինքնապատասխանի: Որոշիչը նամակի նմանությամբ նկարագրական-վերլուծական բնույթի տեքստն է՝ կտրուկ և որոշակի հարցադրումներով:

Չարենցյան նամակագրությունը գաղափարական կոշտ շեշտադրումներ է ձեռք բերում կյանքի հատկապես վերջին տարիներին: Հասարակական կյանքի տվյալ փուլում (20-րդ դարի 20-30-ական թթ.) բաց նամակները շատ կենսունակ էին. դրանք կոնկրետ հասցեատեր ունեին, և դրանցում արձարծվող հարցերը հանրայնացվում էին և արձագանքներ ենթադրում: Ի դեպ, ժանրը բնորոշ էր նաև անտիկ շրջանին, երբ բովանդակային որևէ հարց՝ դավանաբանական, գիտական, փիլիսոփայական և այլն, կարող էր հանրային

սեփականություն դառնալ, քննարկման դրվել, տարածվել, իսկ լեզվական պահանջը սեղմությունը, մատչելիությունը, տրամաբանականությունը, փաստարկվածությունն էր: Ըստ այդմ էլ՝ խոսքի ներգործությունը մեծացնելու նպատակով շարադրանքում զուգակցվում են միաժամանակ տարբեր ոճեր՝ հռետորական, գեղարվեստական և այլն: Խոսքի արտահայտչականությունն ու հուզականությունը արտահայտվում են բառի, ձևաբանական, շարահյուսական տարբեր միավորների և կաղապարների ընտրությամբ, որոնք նրան հաղորդում են յուրահատուկ հնչերանգ, դարձնում ավելի արտահայտիչ, պատկերավոր:

Ե. Չարենցի «Բաց նամակներին» կանդրադառնանք ավելի մանրամասն այն պատճառաբանմամբ, որ թեև դրանք անավարտ են մնացել, այսուամենայնիվ, խոսքի կառուցվածքի ինքնատիպությամբ, բնույթով խորապես անհատականության կնիք կրող գրություններ են և էապես տարբերվում են գրական-հասարակական կյանքը ողողած նեղ անձնական շահեր սպասարկող այլ նամակներից: Ժամանակի կտրվածքում դրանք առանձնանում են հոգեբանորեն ներագդելու կարողությամբ: Այս համատեքստում նպատակին և արդյունքին հասնելու բանաստեղծի ստեղծագործական փորձը ապահովում է լեզվական-ոճական ձեռքբերումների նոր որակ և՛ կառուցվածքային, և՛ բովանդակային պլանում:

Այսպես՝ խոսքի՝ գրավոր, թե՛ բանավոր երկընտրանքում նախապատվությունը տրվեց գրավոր նամակին ՀԿ(Բ)Կ Կենտկոմի քարտուղար Վ. Ամատունու հետ հանդիպումը չէր կայանում), այսինքն՝ իրավիճակը, միջավայրը և թեման մեծապես ապահովեցին գրավոր հաղորդակցման նպատակահարմարությունը: Ուստիև ասելիքը հասցեատիրոջը հասցնելու միջնորդավորված այս ձևը հիմնավորված էր: Վերջինիս Չարենցն ուղղել է մի քանի «Բաց նամակ»: Իմաստային, ձևային-կառուցվածքային, ոճական-արտահայտչական առումով դրանք ժանրը բնութագրող հատկանիշների սահմաններում են՝ դիմելաձև, հասցեատեր, սկիզբ, բուն շարադրանք, վերջամաս: Դրանք «կյանքի և մահվան հաշվետվություն» են (բանաստեղծի բնորոշումն է), ինքնաքննադատաբար գրված (ժամանակի պահանջն էր) «խարտիա»՝ մտավոր և ֆիզիկական ուժերի գերլարման և ինքնասպառման մի վերջին փորձ: Ձևի ընտրությունը ինքնանպատակ չէր: Նամակները ծավալուն (1-5 թերթ) գրություններ են (տպագրվել են կրճատումներով), որոնք կառուցվածքային տեսանկյունից հետաքրքիր զարգացումներ են ստանում: Բանաստեղծի անհատականությունը դրսևորվեց շարահյուսական յուրահատուկ կառույցի ընտրությամբ, այն է՝

պարբերությո՞ւ, որը համապատասխանում էր տվյալ իրավիճակում հաղորդակցվելու իր նպատակին և պահանջին:

Լեզվական միավորների ներքին հարաբերություններն ու կապերը զուգակցվում և ձևավորվում են շաղկապների, շաղկապական բառերի, վերաբերականների, դերանունների միջոցով:

Լեզվաբան Գ. Գարեգինյանը գրել է. «Պարբերությո՞ւ բազմաբարդ նախադասության մի առանձին տեսակ է, որպես կանոն, ավելի ծավալուն, որ կառուցվում է ուրույն ձևով և տարածված է գերազանցապես գեղարվեստական գրականության (չափածո և արձակ) և հրապարակախոսության լեզվում: Պարբերությո՞ւ ընդգծված ոճական արժեք ունի, քանի որ աչքի է ընկնում զգացական հագեցվածությամբ: Որպես ոճական գունավորում ունեցող կառույց, այն գերազանցապես օգտագործվում է գրավոր խոսքում» (Գարեգինյան 1984: 356) :

Մեջբերենք մի հատված Ե. Չարենցի անավարտ նամակից. «...Մի՞թե խորհրդային ամենալայն հասարակության համար գաղտնի՞ք է, թե ի՞նչ փոխհարաբերություն է ստեղծվել գոնե <ե> վերջին մի քանի տարիների ընթացքում իմ և այդ մարդկանց միջև գրական-հասարակական-քաղաքական և անգամ կենցաղային իմաստով,-մի՞թե կարող է գոնե խորհրդային գրական հասարակության համար գաղտնիք հանդիսանալ այն զարհուրելի, բառացի իմաստով անգամ քստմնելի հասարակական-քաղաքական հալածանքն ու օստրակիզմը, որի հետևանքով ավելի քան երեք տարի է ահա, որ ես միանգամայն դուրս եմ շարտված հասարակական-գրական ասպարեզից,-կարո՞ղ է արդյոք գաղտնիք հանդիսանալ խորհրդային գրականության ասպարեզից ինձ կատարյալ վտարման ենթարկելու փաստը...» (Գասպարյան 1990: 340):

Բառապաշարը ներառում է հեղինակային նորակազմություններ (մանուկապատում, իդեաթափ, նպատակահայաց), փոխառություններ (տեքստ, բրոշյուր, կատեգորիա, նաև սպեցիֆիկ, մոմենտ, սիտուացիա (վերջիններս ներկայումս ընկալվում են որպես օտարաբանություններ), խոսակցական լեզվին բնորոշ տարրեր (դարձվածքներ, հարադրություններ) և այլն:

Խոսքային նույն հատվածում արտահայտչականությունը ընդգծող միջոցներից է լեզվական լրացուցիչ տարրերի գործածությունը. բառի, նախադասության կրկնություններն ակնհայտ ոճական արժեք ունեն, ընդգծում են խոսքի զգացական, նաև բովանդակային կողմը՝ սաստկացնելով դրանց նշանակությունը: Արտասանական հնչերանգով ձևավորված նախադասությունները ներառում են տրամադրությունների, հույզերի աստիճանական կուտակում: Կրկնության տարրեր ձևերի համատեղ գործածությունը խոսքը դարձնում է առավել կտրուկ, ռիթմիկ,

ազդեցիկ, մեկ այլ դեպքում քերականական միավորի կրկնությունը կասկած և թերահավատություն է արտահայտում:

Արտահայտման ձևով նամակները մենախոսական բնույթի են. ներքին խոսքը հագեցած է ճարտասանական հարցերով, որոնք ուղղված են ինչպես հասցեատիրոջը, այնպես էլ իրեն՝ երբեմն վերածվելով ինքնանպատակ երկխոսության: Դրանք հոետորական-հրապարակային խոսքի իրավիճակային արտահայտություններ են՝ կամքի, զգացմունքների զուգորդումների ներդաշնակ համապատասխանությամբ: Լեզվամտածողության և հոգեբանության փոխկապակցվածությունը առարկայական է, որն արտահայտվում է նաև իմաստային բազմազանություն ունեցող հաստատական, ժխտական, սաստկական, երկբայական, ցուցական վերաբերականների միջոցով, որոնք բովանդակային կողմին զուգահեռ դատողական տարաբնույթ երանգներ են հաղորդում գրվածքին:

Հատուկ դեր են կատարում ճարտասանական դարձույթները՝ ճարտասանական հարց, ճարտասանական դիմում, որոնցով ձևակերպված հարցադրումները կասկածի տակ են առնում տեղի ունեցող երևույթների պատճառի և հետևանքի միջև եղած փոխադարձ կապը: Արտահայտչական առումով առանձնանում են նաև ներդրյալ նախադասությունները. դրանք խոսքի տրամաբանության և բովանդակության տիրույթում են: Գ. Գարեգինյանը նկատել է. «Բանավոր խոսքում նախապես «չնախատեսված» նման հեղինակային միջամտությունները, գրավոր խոսքում անշուշտ արդեն «նախատեսված» են լինում, ուստի և այստեղ նրանք արդեն ձեռք են բերում ոճական յուրահատուկ արժեք, դառնում խոսքի, մտքի շարադրման հատուկ եղանակ» (Գարեգինյան 1984:370):

Այսուհանդերձ, նամակներում նկատելի են շարադրանքի որոշակի ձգձգվածություն, կրկնաբանություններ, ավելորդաբանություններ, ռուսաբան կառույցներ:

Ժամանակակիցներին ուղղված խոսքը՝ հորդորի, խրատական, ճանաչողական բովանդակությամբ, հանդես է գալիս նաև չափածո ուղերձի ձևով. այն կարող է լինել հետադարձ հայացք կամ ներկաներին ուղղված խոսք՝ հանդիսավոր և մտերմիկ (Ե. Չարենց «Ուղերձ մեր հանճարեղ վարպետներին»): Սա գեղարվեստական հնարք է, որի նպատակը սերունդների երևակայական հանդիպումը, ժառանգական կապը մի շղթայի մեջ ներառելն է՝ այն դիտարկելով որևէ հրատապ խնդիր քննարկելու և լուծման ելքեր գտնելու միջոց:

Ժամանակի ընթացքում ժանրի կառուցվածքային փոփոխություններից մեկը նամակի վերջամասում արված նշագրումն է՝

Հ.Գ. (P.S.): Այն շարադրանքի տրամաբանության մեջ է և ընկալվում է որպես իմաստային լրացում, որպես մոռացված, սակայն բովանդակային կարևոր հավելում:

Չարենցյան նամակագրության մեջ խոսքային բազմազանությունը հեղինակի անհատական լեզվամտածողության ինքնատիպ արտահայտություններից է և գրավոր հաղորդակցման մեջ գեղարվեստական-ոճական կարևոր գործառույթ ունի:

Նամակի ժանրը գրավոր հաղորդակցման շրջանակում ունեցավ ոչ միայն միջանձնային, այլև հասարակություն-անհատ փոխհարաբերությունները բնութագրող անդրադարձներ՝ գործառությունների լայն ընդգրկումներով՝ ինքնադրսևորում, ինքնաճանաչողություն, ներգործում և այլն:

Տարբեր ժամանակահատվածներում տարածված են եղել անստորագիր, կոլեկտիվ, համեմատաբար վերջերս՝ աֆրիկյան կամ նիգերական (որոնք առավել տարածված են համացանցում), շղթայական նամակները (երջանկություն գտնելու, արագ հարստանալու և այլ հնարովի խոստումներ տվող որոշակի կաղապարով ձևակերպված գրություններ՝ ի կատար ածվելու անհրաժեշտ պայման դնելով դրանց բազմացնելն ու տարածելը) և այլն:

Մեր ժամանակներում նամակագրության թղթային հաղորդակցման ձևը գրեթե կորցրել է իր գերակայությունը, և նախապատվությունը տրվել է էլեկտրոնայինին, իսկ պատճառները տարբեր են: Վերջինիս գլխավոր խնդիրը կամ առավելությունը հեռավորության վրա տեղեկատվության արագ իրացումն է՝ ժանրին ամրագրված նորմերի շրջանցումով. նամակի սկզբնամասը և վերջամասը, դիմելաձևերը, հաղորդակցման էթիկետի կանոնները գրեթե անտեսվում են: Ըստ նամակագրի հայեցողության՝ խմբագրվում է գրավոր խոսքի և՛ տեքստը, և՛ կառուցվածքը. ավանդույթը չի պահպանվում թե՛ օբյեկտիվ, թե՛ սուբյեկտիվ պատճառներով: Այժմ այն առավելապես գործնական բնույթի հաղորդում է, որի գործառույթը սահմանափակվում է տեղեկատվությունը ի գիտություն ընդունելու, դրան արագ ծանոթանալու, իսկ երբեմն էլ չարձագանքելու հեռանկարով: Այսպես այն մոտենում է հեռագրային ոճին՝ հաղորդվելիքը սեղմ և արագ իրականացնելու հնարավորությամբ, ինչն էլ այն նախընտրելի է դարձնում արդյունավետության, հարմարավետության և ժամանակի խնայողության տեսանկյունից:

Գիտության առաջընթացն ավելացրել և ակտիվացրել է տեղեկություն հաղորդող տեխնիկական հնարավորությունների դերը՝ SMS, էլեկտրոնային փոստ, skype, viber, facebook, zoom, twitter,

messenger, telegram, տեսա և ձայնային (video և audio), և դեռ ավելին՝ միաժամանակյա շփումներ մի քանիսի հետ:

Էլեկտրոնային նամակագրության յուրահատկություններից մեկը խոսքում emoji-ների, emoticon-ների անվերապահ կիրառությունն է. պատկերների, գաղափարագրերի այս բազմազան ու բազմաթիվ կոնֆիգուրացիաների՝ տեքստին զուգակցումը զգացական երանգ է հաղորդում գրավոր խոսքին՝ ներառելով ներքին, թաքնված հույզեր ու ենթամաստներ (ի դեպ, ձեռագիր նամակում այս դերը վերապահված էր լեզվաոճական տարբեր միջոցների): Վերոհիշյալ հանգամանքները հաղորդակցվողների միջև փոխադարձ լրացնող հարաբերություններ ստեղծելու նոր և հարակից հնարավորություններ են, որոնք նաև հեշտացնում են շփումները: Լեզվական այս միջավայրում շարադրանքի լեզուն կախվածություն է ձեռք բերում զուգակցվող կամ ուղեկցվող հանգամանքներից՝ նշան-պատկերներ, խորհրդանիշներ, որի արդյունքում, կարծում ենք, թերևս տուժում է գրողի անհատականությունը: Չնայած դրանք հուզարտահայտչական որոշակի երանգավորում են հաղորդում ասելիքին, բայց և այնպես նվազեցնում են շարահյուսական կառույցների դերը, այսինքն՝ արտաքին ձևը դառնում է նաև բովանդակային կողմ: Հատկապես երիտասարդության շրջանում հաղորդակցման բառաքանակը դառնում է սահմանափակ, բառապաշարը՝ աղքատիկ, շարահյուսական կառույցները՝ զուսպ:

Էլեկտրոնային նամակագրությունում վարվելաձևի դրսևորումները տարբերվում են ավանդականից. բարեկրթության շրջանակներից դուրս է ժարգոնի, գոեհկաբանությունների, հասարակաբանությունների կիրառությունը:

Հաղորդակցման այս հարթակում ու՞մ-ի՞նչ մտայնությունը ընկալվում է որպես առաջնային դրույթ. ի՞նչպես-ը այնքան էլ չի կարևորվում լեզվական առումով:

Ի դեպ, փոփոխության են ենթարկվում խոսքային հաղորդակցման ոչ միայն բովանդակային և ձևային, այլև գրողի և ստացողի հարաբերությունները. գրական-գրքային և խոսակցական լեզվի տարրերի համակցումը պայմանավորված է լեզվակիրների որոշակի մակարդակով մասնավորապես տարիքային տարբեր խմբերում: Կա նաև խնդրի երկրորդ կողմը. էլեկտրոնային նամակագրության լեզուն շատ հաճախ տարբեր հիմնավորումներով (ավելի հարմար է, արագ, տեխնիկական պատճառներ, նաև՝ ծուլություն և այլն), ի հեճուկս գրավոր լեզվի հանդեպ նախանձախնդիր եղողների, զգալի չափով դեռևս լատինատառ է:

Տարբեր ժամանակահատվածներում տեղի են ունեցել ժանրի ձևաչափի, բովանդակության, լեզվաոճական առանձնահատկությունների

որոշակի փոփոխություններ. դրանցում կարևոր դեր է վերապահված ոչ միայն լեզվական, այլև արտալեզվական գործոններին: Իրար հաջորդող հասարակական զարգացման պատմամշակութային փուլերը ըստ հայեցողության սրբագրում են մտցրել ավանդական նամակագրական ժանրի խոսքային գործառույթներում առաջադրելով այլևայլ պահանջներ: Մեր օրերում գրավոր հաղորդակցման մեջ նվազել է ձեռագիր նամակի դերը. գիտական առաջընթացին զուգահեռ անատարկելի հանգամանք է դառնում բանավոր խոսքի տարածման և դերի կարևորության գործոնը:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. Գարեգինյան Գ., Ժամանակակից հայոց լեզու, Երևան, 1984, էջ 356, 370:
2. Գասպարյան Դ., Ողբերգական Չարենցը, Երևան, 1990, էջ 327:
3. Եզեկյան Լ., Հայոց լեզվի ոճագիտություն, Երևան, 2003, էջ 332-369:
4. Չարենց Ե., Երկիր ժողովածու, հ. VI, Երևան, 1967, էջ 375, 448:
5. Պողոսյան Պ., Խոսքի մշակույթի և ոճագիտության հիմունքներ, հ. II, Երևան, 1991, էջ 103-130, 178-182:

ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ԿԱՅՔԵՐ

1. <https://www.scince-education.ru/ru/article/view?id=23755>
2. <https://www.eduherald.ru/ru/article/view?id=1730>
3. <https://www.journals.tsu.ru/uploads/import/1387/files/033-111.pdf>

REFERENCES

1. Gareginyan G., Zhamanakakits hayots lezu, Erevan, 1984, page 356,370
2. Gasparyan D., Voghbergakan Charents, Erevan, 1990, page 327
3. Yezekyan L., Hayots lezvi vochagitutyun, Erevan, 2003, pg. 332-369
4. Charents E., Yerkeri zhoghovatsu, v. 6, Erevan, 1967, page 375, 488
5. Poghosyan P., Khosqi mshakuyti ev vochagitutyun himunqner, v.2, Erevan, 1991, pg.103-130,178-182

СУСАННА ГАБРИЕЛЯН - ЭПИСТОЛЯРНЫЙ ЖАНР: ПОПЫТКА ЛИНГВОСТИЛИСТИЧЕСКОГО АНАЛИЗА

Ключевые слова: коммуникация, эпистолярный, образец, традиция, структура, письменная речь, тенденции развития, электронная переписка

В статье анализируются лингвостилистические особенности эпистолярного жанра (в частности, личной переписки). Со времен античности был выработан образец письма, в котором четко определялись жанровые требования к форме и содержанию. По семантике и структуре письмо - это целостный коммуникативный текст,

преодолевающий границы времени и пространства. В статье уделяется особое внимание эпистолярно Е. Чаренца - одному из интересных проявлений творчества великого поэта. Со временем эпистолярный жанр претерпел лингвистические, структурные и стилистические изменения, которым, безусловно, способствовал научно-технический прогресс. Развитие технологий открывает новые возможности, предлагая множество коммуникативных форм, и вместе с тем, ставит новые требования. В статье сопоставляются, дифференцируются и анализируются изменения, перспективы и тенденции развития лингвостилистики эпистолярного жанра.

SUSANNA GABRIELIAN - THE GENRE OF CORRESPONDENCE: AN ATTEMPT OF LINGO-STYLISTIC STUDY

Keywords: *communication, letter, sample, tradition, structure, written speech, development trends, e-mail correspondence*

The present article is devoted to the study of the linguostylistic peculiarities of correspondence genre (with special reference to personal letters).

As early as in ancient times a specific model of correspondence was developed which clearly defined the requirements for its content and format. From the semantic and structural perspectives the letter is a complete text which is a means of communication overcoming time and space.

In the present work a special reference is made to Y. Charents's correspondence which is one of the interesting manifestations of the poet's creative mind. Over time correspondence has undergone linguistic, structural and stylistic changes also brought about by scientific and technological advances which provide various opportunities for communication, at the same time, setting new requirements.

The article focuses on the comparison, distinction and analysis of various changes, prospects and development trends of written speech.

Ներկայացվել է՝ 20.01.2021
Գրախոսվել է՝ 20.01.2021